

ՀՏԴ 323.173

**ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՍՏՈՂ  
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

**ՌԱՖԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Հոդվածում ներկայացված են քաղաքական անջատողականության պատճառներն ու նպաստող գործոնները:

Ուսումնասիրելով քաղաքական անջատողականության պատճառներն ու նպաստող գործոնները՝ կարելի է պարզել, որ դրանք շատ են և բազմազան: Յուրաքանչյուր անջատողականություն ունի իր ուրույն դրդապատճառը, որը կարող է նաև չլրկնվել մնացած դեպքերում:

**Բանալի բառեր.** անջատողականություն, կենտրոնական կառավարություն, ենթամիավորում, ազգայնականություն, էթնիկական խումբ, տնտեսական շահագործում, մշակութային հակասություն:

Յուրաքանչյուր անջատողական շարժման հիմքում ընկած են որոշակի պատճառներ, որոնք էլ հիմք են հանդիսանում որոշ խմբերի կողմից անջատողական շարժումներ սկսելու համար: Ուսումնասիրելով այդ հարցերը՝ մենք կարող ենք պարզել, թե ինչու են առանձին խմբեր ցանկանում անջատվել բուն պետությունից: Յուրաքանչյուր անջատողական շարժում ունի իրեն բնորոշ պատճառներն ու նպաստող գործոնները:

Անջատումը նախկինում ձեռք բերված քաղաքական պարտավորությունների ընդհատումն է և տարածքային անցումը նոր պետության: Հետևաբար անջատման յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա իր հիմնավորումները, հակառակ պարագայում այն առաջին հերթին չի ընկալվի և չի ընդունվի հենց տվյալ տարածքի բնակչության կողմից:

Կ. Սանստեինն առանձնացրել է անջատողականության մի քանի պատճառներ, դրանք են՝ քաղաքացիական իրավունքների կամ քաղաքացիական ազատության սահմանափակումը, տնտեսական շահագործումը, պատմական գործընթացները, մշակութային ինտեգրումը և այլն [1, p. 654-655]: Սրանք են հենց համարվում անջատողական շարժումների առաջացման հիմնական պատճառները, չնայած որ այս պատճառներին կից կարող են լինել նաև այլ նպաստող գործոններ:

**Քաղաքացիական իրավունքների կամ քաղաքացիական ազատության սահմանափակումը.** ենթամիավորումը կարող է անջատվել բուն պետությունից, քանի որ քաղաքացիները ենթարկվում են պետությո-

յան կողմից ճնշումների, սահմանափակվում է քաղաքացիների ազատությունը: Վառ օրինակ է Խորհրդային Միությունը, որտեղ համատարած սահմանափակվում էին ազատ խոսքի իրավունքը և քաղաքացիների ազատությունը, որոնք էլ հանդիսացան նպաստող գոծոններ՝ պետության կազմից դուրս գալու համար: Կառավարական ճնշումները կարող են սահմանափակել բնակչության մի մասի կամ որևէ խմբի ազատ խոսքի իրավունքը, որն էլ կառաջացնի խտրականություն այդ խմբի նկատմամբ: Եթե ճնշումները համատարած են այդ խմբի նկատմամբ, ապա անջատողական դրսևորումը կարող է դիտարկվել որպես համապատասխան հակազդեցություն: Անջատողական շարժումներն այդ դեպքում փորձում են կանխել ճնշումները և բարելավել իրենց կարգավիճակը: Միայն քաղաքական ճնշումները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ անջատվելու համար, սակայն անջատման իրավունքն անհրաժեշտ է օգտագործել առավելագույնս, քանի որ եթե նույնիսկ ենթամիավորումը չկարողանա անջատվել, ապա կարող է որոշակի արտոնություններ ձեռք բերել:

Պետության կազմից դուրս գալու սահմանադրական իրավունքը կարող է կիրառվել, երբ սահմանափակվում են քաղաքացիական իրավունքները և քաղաքացիների ազատությունը: Այս փաստարկը հիմնված է Թ. Ջեֆերսոնի աշխատության վրա, ըստ որի «եթե որևէ միության մեջ գտնվող «պետություն» կհայտարարի, որ գերադասում է անջատվել, ապա ես առանց տատանվելու կասեմ՝ թող նրանք անջատվեն» [1, p. 657]:

Քաղաքացիական իրավունքների և ազատության սահմանափակումը հիմք հանդիսացավ նաև Արևելյան Եվրոպայում անջատողական շարժումների առաջացման համար:

**Տնտեսական շահագործում.** անջատողականության ավելի լուրջ պատճառ է տնտեսական շահագործումը, քանի որ այս դեպքում ենթամիավորումը կորցնում է որոշակի եկամուտներ, որոնք տրվում են կենտրոնական կառավարությանը: Տնտեսական շահագործումն աստիճանաբար քայքայում է ենթամիավորումների պաշարները՝ նվազեցնելով եկամուտները: Այս քայլով եկամուտներն օգտագործվում են ընդհանուր նպատակների համար: Կենտրոնական իշխանությունների այսպիսի քաղաքականությունը կարող է նպաստող հանգամանք հանդիսանալ անջատման համար: Հարավսլավիայի փլուզման հիմնական պատճառը դարձավ հենց այս, որտեղ տնտեսապես հարուստ Սլովենիան և Խորվաթիան մտավախություն ունեին, որ հետագայում նրանց միջոցները կարող են տրամադրվել Հարավսլավիայի մաս կազմող այլ պետությունների: Իսկ ներկայում, տնտեսական շահագործման վառ օրինակ կարելի է համարել Կատալոնիայի դեպքը, որտեղ Իսպանիան օգտագործում է նրա եկամուտները և

քիչ բաժին է հատկացնում Կատալոնիայի բնակչության կարիքների համար: Թերևս սա կարելի է համարել կատալոնական անջատողական դրսևորման հիմնական պատճառը:

4. Սանտեիներ գտնում է, որ տնտեսական շահագործումը կարող է իսկապես լուրջ դեր խաղալ անջատման համար, սակայն, մյուս կողմից, հնարավոր չէ առավել ճշգրիտ հաշվարկել եկամուտներն ու ծախսերը, քանի որ ենթամիավորումները տնտեսապես փոխկապակցված են միմյանց [1, p. 661]: Ենթադրենք, որ որոշ դեպքերում ենթամիավորումները ենթարկվում են տնտեսական շահագործման, ապա այս խնդրի միակ լուծումը չի կարող համարվել անջատումը, այլ կարելի է տնտեսական քաղաքականության փոփոխմամբ հստակ սահմանել այս խնդիրների լուծումները:

**Պատմական գործընթացներ.** անջատողականությանը նպաստող գործոններից է նաև «պատմական անարդարության» գաղափարը, այսինքն՝ մի պետություն, որը նախկինում եղել է անկախ և ինքնիշխան, պատերազմի միջոցով հայտնվել է այլ պետության կազմում, դա էլ ստիպում է նրան անջատման միջոցով ուղղել պատմական սխալը: Այս գաղափարը հետագայում խթան հանդիսացավ Բալթյան երկրներում անջատողական շարժումներ սկսելու համար, որոնք բռնի կերպով միացվել էին ԽՍՀՄ-ին, որի փլուզումից հետո անկախացան ոչ միայն այդ երկրները, այլ նաև այն պետությունները, որոնք նույնպես բռնի կերպով էին միացվել ԽՍՀՄ-ին: Այս փաստարկի հիման վրա պետություններն ունեն «բարոյական իրավունք» անջատվելու համար:

**Մշակութային ինտեգրացում.** այն դրսևորվում է, երբ պետության մեջ գտնվող ենթամիավորումն իրեն ընկալում է որպես էականորեն տարբերվող նորմերի և սովորույթների կրող [1, p. 664]: Այս հանգամանքը կարող է համարվել նպաստող գործոն անջատողական դրսևորումներ ցուցաբերելու համար, ինչպես եղավ Չեխոսլովակիայում, մասնավորապես՝ Սլովակիան, որն ավելի ջերմ էր վերաբերվում կաթոլիկ եկեղեցուն և գյուղատնտեսապես ավելի զարգացած երկիր էր համարվում, քան Չեխիան: Իհարկե, մշակութային միատարրությունը կարող է մեծ ռիսկեր առաջացնել, սակայն տարբեր խմբերի միջև շփումը կարող է առաջացնել այլ նորմեր, և կարող է լուրջ խթան հանդիսանալ ժողովրդավարական կարգեր հաստատելու համար: Չի կարելի ասել, որ անջատման պարագայում արդարացված կլինի նրանց քայլը, քանի որ հետագայում կարող են առաջանալ այնպիսի խնդիրներ, որոնք տվյալ ենթամիավորումը կամ խումբը չկարողանա միայնակ լուծել: Երբեմն անջատման կոչերը հնչում են զգացմունքային հողի վրա, որը հաճախ հրահրվում է որոշ շահառու խմբերի կողմից: Մշակութային ինտեգրումը՝ համեմատած մյուս պատճառների հետ, ավելի թույլ պատճառ է հանդիսանում անջատման համար, սակայն

այս պարագայում նախընտրելի կլինի բանակցային կարգավորման միջոցով չթողնել, որ լարվածությունը մեծանա:

Քաղաքական անջատողականությամբ զբաղվող որոշ տեսաբաններ անջատողականության պատճառներից առանձնացնում են նաև **կենտրոնական կառավարության նկատմամբ վստահության բացակայությունը**, երբ իշխանությունների կողմից կիրառվում է այնպիսի քաղաքականություն, որը կարող է հանգեցնել ճգնաժամային իրավիճակի [2, ր. 2-3]: Այս պարագայում ենթամիավորումն առանձնանում է և սկսում ինքնուրույն լուծել իր առջև ծառայած խնդիրները: Կենտրոնական իշխանության նկատմամբ վստահության բացակայությունը հաճախ դրսևորվում է կառավարման դաշնային կամ համադաշնային համակարգ ունեցող երկրներում, սակայն այս գործոնի առկայությունը համարվում է շատ թույլ, ուստի այն հաճախ չի հանգեցնում անջատման:

Վ. Մակարենկոն, ուսումնասիրելով քաղաքական անջատողականության պատճառները, առանձնացնում է 3 հիմնական պատճառ: Դրանք են՝ բռնի կերպով միացման հետևանքների վերացումը, ինքնապաշտպանություն նախահարձակից (ագրեսորից) և բաշխման անհավասարությունը [3, ս. 54-58]:

**Բռնի կերպով միացման հետևանքների վերացում.** Թերևս այս անջատման ամենապարզ պատճառներից է, քանի որ քաղաքական անարդար միացումից ցանկացած երկրամասի բնակչություն կցանկանա անջատվել: Այս փաստարկը հիմնված է այն սկզբունքի վրա, որ անջատումը տվյալ ենթամիավորման բնակչությունը համարում է գողացված սեփականության վերադարձ իրավասու իշխանությանը: Պատմության ընթացքում շատ են եղել նման դեպքեր, երբ որևէ տարածաշրջան բռնի կերպով, անարդար որոշման արդյունքում կցվել է որևէ երկրի, սակայն որոշ ժամանակ անց նրանք ստացել են անկախություն: Դրա վառ օրինակներից է 1960-ական թվականներին գաղութատիրության դեմ պայքարը և մեկը մյուսի հետևից աֆրիկյան մի շարք երկրների անկախություն ստանալը: Թերևս սա է հանդիսացել նաև այն հիմնական պատճառը, որը հաշվի առնելով Արցախն ինքնորոշվեց, չնայած որ այն երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում և ըստ ԽՍՀՄ նախկին գործող սահմանադրության լիիրավ իրավունք է ունեցել ինքնորոշվելու:

**Ինքնապաշտպանություն նախահարձակից (ագրեսորից).** Էթնիկական խումբը հաճախ կարող է դիմել ինքնապաշտպանության, որպեսզի դիմակայի կենտրոնական իշխանության ճնշումներին: Այս կիրառվում է ծայրահեղ դեպքերում, երբ արդեն ավարտված են լինում երկխոսության բոլոր եզրերը: Ինքնապաշտպանության իրավունքի կիրառումը պետք է

լինի սահմանափակ, այսինքն՝ պատասխանը չպետք է գերազանցի անհրաժեշտ պաշտպանության սահմանները և չպետք է հրահրի նոր նախահարձակում (ագրեսիա): Կենտրոնական իշխանությունը գիտակցելով, որ այլևս փաստացի չի տիրապետում տվյալ տարածքին, իսկ տվյալ տարածքում ապրող էթնիկական խումբն էլ փաստացի դարձել է ինքնակառավարվող, հաճախ դիմում է նախահարձակման, որպեսզի նորից հաստատի իր իշխանությունը: Այս պարագայում էթնիկական խումբը դիմակայելով նախահարձակմանը դիմում է ինքնապաշտպանության և թելադրում է իր պայմանները:

Կան տարբեր իրավիճակներ, որը հաշվի առնելով էթնիկական խումբը ցանկանում է օգտվել անջատման իրավունքից: Էթնիկական խումբը ցանկանում է անջատվել այս կամ այն պետությունից, որպեսզի խուսափի ոչնչացման սպառնալիքից: Այս պայմաններում էթնիկական խումբն անջատման համար կարող է անել հետևյալը. տապալել տվյալ պետության կառավարությանը, հեղափոխություն կազմակերպել կամ պատերազմ հայտարարել [3, ԵՄ. 55]: Պատերազմի հաղթանակից հետո էթնիկական խումբն ամրապնդվում է տվյալ տարածքում, ստեղծում է ինքնապաշտպանության ռազմաքաղաքական կառուցակարգեր, ձգտում է ճանաչվել և աջակցություն ստանալ այլ ինքնիշխան պետություններից կամ էլ միջազգային կազմակերպություններից: Տվյալ ընթացքից հետո նախահարձակն ամբողջությամբ կորցնում է տվյալ տարածքի նկատմամբ իշխանությունը և իրեն ներկայացնում է որպես տուժող:

**Բաշխման խտրականություն.** այս դեպքում տվյալ պետության կառավարությունը վարում է խտրական տնտեսական քաղաքականություն, որտեղ մի շրջան կրում է մեծ վնասներ, որից կարող են օգտվել այլ շրջաններ: Դա կարող է դրսևորվել հարկերի ավելացմամբ, առանձին շրջանների հարկային արտոնությունների տրամադրմամբ և այլն, որոնք կարող են հանգեցնել տնտեսության անհավասար զարգացման: Այս խտրական վերաբերմունքը մատնանշելով, տվյալ տարաշաշրջանում ապրող խմբերը առաջ են քաշում անջատման գաղափարը, որպեսզի դրա սպառնալիքը հաշվի առնի կառավարությունը և փոխի տնտեսական քաղաքականությունը, հակառակ պարագայում՝ այն կարող է հանգեցնել անջատման:

Անջատողականության նպաստող գործոն կարող է համարվել նաև արտաքին ազդեցությունը, որի միջոցով կարող են միջամտել պետության ներքին գործերին և անջատողական գործողություններ հրահրել [4, ԵՄ. 53]: Որպես կանոն դրանք կարող են գործել հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հատուկ ծառայությունների, ահաբեկչական խմբավորումների, միգրացիոն կենտրոնների և այլ միջոցներով:

Արտաքին ուժերն աջակցելով հակամարտությունում գտնվող կողմերից որևէ մեկին, փորձում են իրենց ազդեցությունը մեծացնել տվյալ երկրում և տարածաշրջանում, որպեսզի հետագայում կարողանան իրենց շահերից բխող քաղաքականություն թելադրել: Քաղաքացիական պատերազմներ կամ անջատողականություն հրահրելով արտաքին ուժերը կարող են անմիջական ռազմական միջամտություն կատարել՝ հակամարտության կողմերից մեկին պաշտպանելու պատրվակով: Ռազմական միջամտությունը կարող է լինել նաև ժողովրդավարական արժեքների կամ խաղաղ բնակչության անվտանգության պաշտպանման հիմնավորմամբ: Հաճախ դրան կարող է հաջորդել խաղաղապահական ուժերի տեղակայումը՝ առանց գործող իշխանության համաձայնության:

Հաճախ լինում է, որ անջատողական խմբավորմանն աջակցող որևէ արտաքին ուժի ներգրավածությանը հաջորդում է մեկ այլ արտաքին ուժի ի հայտ գալու, որոնք աջակցելով հակադիր կողմերի, փորձում են իրենց շահերն առաջ քաշել: Այս դեպքում բախումը դառնում է ավելի դժվար լուծելի, քանի որ արտաքին ազդեցության մեծացմանը զուգահեռ բախման լուծումն արդեն մեծմասամբ կախված է լինում ոչ թե հիմնական հակամարտող կողմերից, այլ դրանում ներառված արտաքին ուժերից: Դրանց վառ օրինակներից է 2003-ի ԱՄՆ-ի ներխուժումն Իրաք, ՆԱՏՕ-ի գործողությունները Հարավսլավիայում և Լիբիայում, Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջամտությունը սիրիական հակամարտությունում և այլն:

Անջատողականության տարածման հիմքում ընկած է նաև ազգայնականության աճը, որը նպաստող գործոն է համարվում անջատողական գաղափարների տարածման համար: Գլոբալացման աճին զուգահեռ, երբ պետությունները կորցնում են իրենց սահմանները և դառնում են ավելի միատարր, թվում է թե ազգայնականությունը պետք է մղվեր հետին պլան, բայց քաղաքական վերջին զարգացումները հակառակն են ցույց են տալիս: Դա հատկապես ակնառու է Եվրոպայում և նախկին խորհրդային հանրապետություններում, որտեղ աջակողմյան արմատական կուսակցությունները հաջողության են հասնում կամ էլ բարելավվում են իրենց նախկին դիրքերը:

Ազգայնականության աճը Եվրոպայում պայմանավորված է նաև ներգաղթյալների ճգնաժամով, որը ԵՄ-ի առաջ ծառայած ամենալուրջ խնդիրներից է այժմ համարվում: Մերձավոր Արևելքից ժամանող ներգաղթյալները լրացուցիչ տնտեսական ծանրաբեռնվածություն են համարվում ԵՄ-ի համար, որն էլ դժգոհության այլք է բարձրացնում տեղացիների մոտ:

Ըստ ուկրաինացի քաղաքագետ Յ. Ռյաբինինի՝ անջատողական շարժումները կարող են սկսվել երկու պայմանների առկայության դեպքում:

Առաջինը՝ էթնիկ փոքրամասնության նկատմամբ խտրականության դեպքում, երկրորդ՝ քաղաքական ընտրանու անջատողական քաղաքականության շնորհիվ [5, p. 7]: Վերջինս դրսևորվում է այն ժամանակ, երբ որևէ դաշնային կամ համադաշնային երկրի ինքնավար երկրամասի քաղաքական ընտրանին հասկանալով, որ հետզհետե կորցնում է իշխանությունը և գնալով նվազում է բնակչության կողմից իշխանության նկատմամբ վստահությունը, սոցիալ-տնտեսական ճախողումները բարդում է կենտրոնական իշխանության վրա և սկսում է շահարկել անջատողականությունը:

Նշելով քաղաքական անջատողականության պատճառները, տնտեսական անհավասարակշռությանից և մշակութային հակասություններից գատ՝ առանձնացվում է նաև քաղաքական տարբեր նախասիրություններ ունենալը: Վերջինս կարող է դրսևորվել այն պարագայում, երբ պետության կազմում գտնվող որևէ երկրամաս ունենա այլ արտաքին քաղաքական նախասիրություն, քան կենտրոնական իշխանությունը: Դրա վառ ասպարեցներից է Ղրիմի անջատումը, որտեղ տեղի բնակչությունը կողմ արտահայտվեց Ուկրաինայից բաժանվելու և Ռուսաստանին միանալու համար:

Կ. Բոյլը և Պ. Էգլերերտն իրենց «Քաղաքականության առաջնայնությունն անջատողականության դինամիկայում» գրքում նշում են, որ անջատողականությունը ոչ թե մշակութային տարբերությունների կամ տնտեսական շահագործվածության պատճառով է արտահայտվում, այլ այն ավելի շատ արտահայտվում է քաղաքական դրդապատճառներով [5, p. 7]: Այսինքն՝ եթե ընդհանրացնենք, նրանք գտնում են, որ անջատողականությունն ավելի շատ քաղաքական գնահատական պարունակող եզրույթ է: Անջատողականության հիմնական պատճառներից հանդիսացող տնտեսական շահագործվածությունը քաղաքական նպատակներով օգտագործելով անջատողական խմբավորումները փորձում են խնդրին ավելի լուրջ նշանակություն տալ, որպեսզի ավելի շատ շահութաբաժին (դիվիդենդներ) ստանան և կարողանան ավելի շահեկան պայմաններ ստեղծեն հետագա տնտեսական գործընթացներում:

Որքան երիտասարդ է լինում պետությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ անջատողական խմբավորումները կսկսեն ծավալել ակտիվ գործունեություն [5, p. 7]: Այն կարելի է տեսնել հատկապես հետխորհրդային երկրներում, որտեղ կենտրոնական կառավարության թուլությամբ պայմանավորված, ինչպես նաև նրանց տնտեսական քաղաքականության անարդյունավետ իրականացմամբ, կարող են ի հայտ գալ ան-

ջատողական շարժումներ: Տվյալ պարագայում կենտրոնական կառավարությունները հաճախ փորձում են ազգայնական գաղափարախոսությունն օգտագործել որպես երկրի միավորման գործիք:

Անջատողականության նպաստող գործոն կարող է համարվել նաև քաղաքական արդիականացումը, որն անխուսափելիորեն ակտիվացնում է էթնիկական գիտակցությունը, նպաստում է ազգային ինքնավարության հասնելու քաղաքական նպատակադրվածության ձևավորմանը [6, էջ 9]: Ապագայում ազգային բախումներն ավելի հաճախակի ծագելով, առաջին հերթին ընդգրկելու են բազմազգ պետությունները, որի հետևանքով նրանց տրոհումն առանձին շրջանների դառնալու է անխուսափելի:

Քաղաքական արդիականացմամբ պայմանավորված՝ փակ հասարակությունները գնալով վերածվում են բաց հասարակությունների, ինչն էապես նպաստում է անջատողական գաղափարների տարածմանը: Եթե նախկինում մի երկրում ապրող որևէ էթնիկական խմբավորում ճնշումների էր ենթարկվում կամ տնտեսապես անհավասար պայմաններում էր ապրում, քան մնացածը, ապա դրա մասին կարող էին տեղեկանալ շատ քչերը, իսկ ներկայում քաղաքական արդիականացմամբ պայմանավորված յուրաքանչյուր խնդիր կարող է մեծ արագությամբ տարածվել աշխարհում: Դա կարող է հասնել նրան, որ էթնիկական խմբերը սկսեն անջատողականությունը շահարկել, որպեսզի որոշակիորեն բարելավեն իրենց կարգավիճակը:

Ուսումնասիրելով անջատողական դրսևորումների պատճառները և նպաստող գործոնները՝ կարելի է փաստել, որ, թեև յուրաքանչյուր անջատողական շարժման հիմքում ընկած են որոշակի պատճառներ, սակայն դրանք կարող են ունենալ նաև հարակից այլ գործոններ: Այստեղ փորձեցինք ընդգրկել ամենատարածված պատճառները, որոնք ներկայում կարելի է շատ հանդիպել ոչ միայն եվրոպական անջատողական դրսևորումներում, այլ նաև ողջ աշխարհում: Այնուամենայնիվ, եվրոպական պետություններն օրենսդրական կամ սահմանադրական փոփոխությունների միջոցով փորձում են հանդարտեցնել ազգայնական տրամադրությունները, որոնց հիմնական նպատակն իրենց երկրի տարածքային ամբողջականության պահպանումն է:

Քաղաքական արդիականացմամբ պայմանավորված՝ գնալով ավելի լսելի են դառնում էթնիկական կամ այլ առաձին խմբերի բարձրացրած խնդիրները, որոնք հիմք ընդունելով՝ նրանք ձգտում են անջատման: Անջատողականության պատճառները հաճախ փորձելով քաղաքական

նպատակներով օգտագործել՝ նրանք փորձում են բարելավել իրենց կարգավիճակը: Ուստի կարելի է փաստել, որ անջատողականությունը դառնում է նոր մարտահրավեր, որին պետք է դիմակայեն հատկապես դաշնային կամ համադաշնային կառուցվածք ունեցող երկրները, ինչպես նաև այն երկրները, որոնք իրենց կազմում ունեն ինքնավար երկրամասեր:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Sunstein C.**, *Constitutionalism and Secession*, The University of Chicago Law Review Vol. 58, No. 2, Approaching Democracy: A New Legal Order for Eastern Europe, Chicago, 2008 [հասանելի էր՝ 10.05.2019] <http://nw18.american.edu/~dfagel/Philosophers/TOPICS/SelfDetermination/ConstitutionalismAndSuccession.pdf>.

2. **Nünlist C.**, “*Separatism in the EU*”, NO. 160, CSS Analyses in Security Policy, 2014 [հասանելի էր՝ 25.05.2019] <http://www.css.ethz.ch/publications/pdfs/CSSAnalyse160-EN.pdf>.

3. **Макаренко В. П.**, *Теория сецессии: посылки, аргументы и следствия*, Вестник Московского университета, Социология и политология, серия 18, н. 4, Москва, 2008.

4. **Иванов С. М.**, *Терроризм и сепаратизм как новые глобальные вызовы нашей цивилизации*, Lambert Academic Publishing, Саарбрюккен, 2016.

5. **Ryabinin Y.**, *The basic causes of the contemporary separatism*, Journal of Geography, Politics and Society, 7(1), Mariupol, 2017.

6. **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, «Պետական ծառայություն» իր., Երևան, 2004:

---

## СЕПАРАТИЗМ: ПРИЧИНЫ И СПОСОБСТВУЮЩИЕ ФАКТОРЫ

### РАФИК АВETИСЯН

---

*Академия государственного управления Республики Армения*

---

В статье представлены причины политического сепаратизма и способствующие ему факторы.

Изучив причины и факторы, способствующие политическому сепаратизму, можно обнаружить, что их много, и они разнообразны. Каждый сепаратизм имеет свой мотив, который нельзя повторить в других случаях, поэтому в статье рассматриваются наиболее распространенные причины сепаратизма и факторы, способствующие ему.

**Ключевые слова:** сепаратизм, центральное правительство, подчинение, национализм, этническая группа, экономическая эксплуатация, культурное противоречие.

---

## SEPARATISM: THE REASONS AND CONTRIBUTING FACTORS

### RAFIK AVETISYAN

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

The article presents the causes of political separatism and factors contributing to it.

After examining the causes and factors contributing to political separatism, the author finds that there are many of them and they are diverse. Every separatism has its own motive, which cannot be repeated in other cases, therefore, the article discusses the most common causes of separatism and the factors contributing to it.

**Keywords:** separatism, central government, subordination, nationalism, ethnic group, economic exploitation, cultural contradiction.

Ներկայացվել է խմբագրություն 08.01.2020  
Երաշխավորվել է պայագրության 17.02.2020